



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՔՆՆՊԱՆՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐ
 Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«26» 03 2014 թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 20


Տրված է՝

<<Մերուժան-Գրիգոր>> ՍՊԸ
 ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լճաշեն

Գործունեությունը՝

Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի /հյուսիսային փեղամաս/ շահագործման նախագծի վերաբերյալ
 ՀՀ Գեղարքունիքի մարզ

Տնօրեն՝



Ա. Գևորգյան

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ **ԲՓ 20**

«26» 03 2014թ.

<<Մերուժան-Գրիգոր>> ՍՊԸ կողմից ներկայացված Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի /հյուսիսային տեղամաս/ շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ

Պատվիրատու՝

<<Մերուժան-Գրիգոր>> ՍՊԸ

Ապրայան 1 09/12/14

Նախագծող՝

Ի. Վարդանյան

Ներկայացված նյութեր՝

Աշխատանքային նախագիծ

Լիազորված անձ՝

Ս. Գալստյան

Տեղադրման վայրը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք

Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի հյուսիսային տեղամասը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, Լճաշեն գյուղից 1.5-2կմ հարավ-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են՝ Սևան քաղաքը, Վարսեր, Գեղավան գյուղերը:


Լեռնագրական տեսակետից շրջանը բնութագրվում է խիստ կտրտված լեռնային ռելիեֆով: Հանքավայրի հաստվածքը շերտաձև է, ունի հորիզոնական տեղադրում: Մշակումն ընդգրկում է 2140-2090մ բարձրության հորիզոնների միջև ընկած զանգվածը: Շրջանի ջրագրական միավորը Հրազդան գետն է իր վտակներով, որոնցից բուն հանքավայրի տարածքը զուրկ է: Շնորհիվ փխրուն ապարների, որոնք օժտված են բարձր ջրաթափանցելիությամբ, մակերևույթային ջրերը հանքավայրի տարածքից հեշտությամբ ներծծվում են խորը հորիզոններ:

Հանքավայրի պաշարները՝ 1350.0հազ. մ³հազ.խմ ծավալով, A+B+C₁ կարգերով հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից՝ 29.01.1963թ թիվ 167 արձանագրությամբ: Նախագծված բացահանքը զբաղեցնում է 5.3հա տարածք, նրանում ներառված արդյունաբերական պաշարները հաշվարկվել են 1127000մ³: Բացահանքում տարեկան մարվելու է 38570մ³ և արդյունահանվելու է 30000մ³ հրաբխային խարամի պաշարներ: Ծառայման ժամկետն ընդունված է 38 տարի: Հրաբխային խարամները լայն կիրառություն ունեն շինարարության բնագավառում՝ որպես թեթև լցանյութ բետոնում և շաղախում:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է ժամանակակից բերվածքային նստվածքներով և հրաբխային խարամներով: Բերվածքային շերտը ներկայացված է թույլ մոխրագույն կրաքարերով և խարամի ջարդոններով: Օգտակար հանածոն ներկայացված է խարամի շերտաձև հաստվածքով, բաղկացած է 48.9% լապիլից, 44.8% ավազից, 3.9% մոխրից և 2.4% խարամի մեծ կտորներից:

Հանքավայրի մակերևույթը ծածկված է միջինը 1.39մ հզորությամբ մակաբացման ապարներով: Տեղամասում խարամի օգտակար շերտի հզորությունը կազմում է միջինը 25.48մ, մակաբացման միջին գործակիցը՝ 1:18:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները, ծածկող շերտի ոչ մեծ ծավալը և օգտակար հանածոյի հզորությունը, բարենպաստ են բաց եղանակով այն շահագործելու



համար: Մակաբացման ապարների հեռացումը նախատեսվում է իրականացնել բուլդոզերի օգնությամբ, իսկ հրաբխային խարամն արդյունահանվելու է էքսկավատորի միջոցով անմիջական շերտիմամբ: Ընդունված է խորացող մշակման համակարգ՝ 5մ բարձրությամբ աստիճաններով: Նախագծված բացահանքը բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- առավելագույն երկարություն - 350մ,
- առավելագույն լայնություն - 150մ,
- տրամադրվող մակերես - 53000մ² (5.3հա),
- խարամի միջին հզորություն - 30մ:

Հանքադաշտի բացումը մինչև ռելիեֆի սահմանագիծ (նիշը՝ 2120մ) իրականացվելու է հանքադաշտի մակերևույթով տեղադրվող խրամով, իսկ սահմանագծից ներքև՝ (նիշը՝ 2090մ) մեկ ընդհանուր ներքին տեղադրմամբ խրամով: Խրամի լայնությունը հատակում կազմում է 8-12մ: Բանվորական աստիճանի կողի թեքման անկյունն ընդունված է 50-55°, իսկ մարված աստիճանի համար՝ 45-50°: Հանքի կողերը մարված են 10մ բարձրությամբ աստիճաններով:

Բացահանքը շահագործման հանձնելու համար նախատեսված է իրականացնել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- Բացող խրամի անցկացում՝ 500մ երկարությամբ, 1500մ³ հողային զանգվածի ծավալով:

- Արդյունաբերական հրապարակի կառուցում՝ 1600մ² մակերեսով և 6000մ³ ծավալով:

- 2140մ նիշ ունեցող հորիզոնում աշխատանքային նախնական հրապարակի և հորիզոնի նախապատրաստում /ապարների հեռացում, ուղեկցվող հանույթ/:

- 2135մ նիշ ունեցող հորիզոնում մակաբացման ապարների հեռացում, ուղեկցվող հանույթ:

Մթնոլորտային տեղումների հոսքը դեպի բացահանք կանխելու նպատակով նախատեսվում է 420մ երկարությամբ ջրհեռացման խրամի կառուցում:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ առաջանում են օգտակար հանածոյի կորուստներ, որոնք պաշտպանիչ բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են 223000մ³ կամ 16.5%:

Մակաբացման ապարները՝ 10700մ³ ծավալով բուլդոզերի օգնությամբ տեղափոխվում և կուտակվում են բացահանքի հարավային մասում ձևավորվող արտաքին լցակույտում: Լցակույտառաջացումն իրականացվելու է մինչև 4մ միջին բարձրությամբ, կայուն թեքման կող ունեցող մեկ աստիճանի հարթակում:

Բացահանքը շահագործող անձնակազմի համար խմելու ջուրը՝ 100լ օրական ծախսով արտադրական հրապարակ է բերվելու ջրատար մեքենայով: Տեխնիկական ջուրը՝ փոշենստեցման նպատակով (6000քմ մակերեսի համար, օրական 2100լիտր ծախսով) նախատեսվում է բերել KO-002 մակնիշի ջրցան-լվացող ավտոմեքենայով:

Աշխատանքային նախագծում ներկայացվել են բացահանքի շահագործման ընթացքում դիզելային և բենզինային վառելիքով աշխատող սարքավորումներից ու մեքենաներից, լցակույտային աշխատանքները մթնոլորտ արտանետվող վնասակար ծխազագերի և փոշու հաշվարկներ: Համաձայն ներկայացված հաշվարկների հնարավոր վնասակար արտանետումները գտնվում են բնակավայրերի համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Հանքավայրի շահագործման ընթացքում և շահագործողական աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով հանվող և բարձվող ապարների թրջում, բացահանքի մուտքային և դեպի լցակույտ տանող ավտոձանապարհների և արտադրական հրապարակի ջրցանում /օրական 2-3 անգամ/,



- դիզելային վառելիքով աշխատող լեռնատրանսպորտային մեքենաների և սարքավորումների վրա խլացուցիչների և ֆիլտրերի տեղադրում՝ առաջացող աղմուկի և ծխազագերի նվազեցման նպատակով:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է բացահանքի հանույթային աշխատանքների ավարտից հետո: Քանի որ հանքի հատակում մնում են խարամի պաշարներ, բուլդոզերի օգնությամբ իրականացվելու է միայն լցակույտի մակերևույթի հարթեցման աշխատանքներ՝ մինչև 0.25մ հզորությամբ մեկ շերտով: Վերականգնվող մակերեսը ընդհանուր կկազմի 3500մ² /կամ 0.35հա/, իսկ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 913.0հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում վառելիքաքսուկային նյութերի պահեստավորումն իրականացվելու է համապատասխան թեքությամբ հարթակի վրա՝ նավթանյութերի արտահոսքը շրջակա միջավայր կանխելու նպատակով: Մեքենաներում օգտագործված փոփոխված յուղերը և քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ և ուղարկվում վերամշակման: Կենցաղային աղբը և շահագործման ընթացքում առաջացող թափոնները պետք է հեռացվեն Լճաշեն համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

Շահագործման փուլում նախատեսվող բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման համար նախագծային փաթեթում ներկայացվել է մշտադիտարկումների պլան՝ իրականացման ժամանակացույցով: Այդ միջոցառումների համար նախատեսվում է տարեկան տրամադրել 200.0 հազ.դրամ:

«Մերուժան-Գրիգոր» ՍՊ ընկերությունը պարտավորվել է իր ֆինանսական ներդրումներով մասնակցություն ունենալ Լճաշեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Հանքավայրի շահագործման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են հասարակական լսումներ, որի ընթացքում նախագծի իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հասարակայնության կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի /հյուսիսային տեղամաս/ փակման նախագծային փաստաթղթերը «Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի» համաձայն, անհրաժեշտ է սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մերուժան-Գրիգոր» ՍՊԸ կողմից ներկայացված Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի /հյուսիսային տեղամաս/ շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Փոխստորեն

Փորձագետ՝



Հ. Գրիգորյան

Հ. Մկրտչյան